

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՍԱՐՁԻ ՏԱԼՎՈՐԻԿ ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՍՈՒՅՆՔԻ
ԴԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի Տալվորիկցիներ, հյուրեր, ավագանու անդամներ: Արձավիրի մարզի Տալվորիկ գյուղական համայնքը հաստատել է իր 2013 թվականի բյուջեն հետևյալ համամասնությամբ:

1. Եկամուտների գծով 15.226.0 հազար դրամ.
2. Ծախսերի գծով 15.671.0 հազար դրամ.
3. Բյուջեի դեֆիցիտ 147.0 հազար դրամ.

Համայնքի գյուղապետարանը Տեղական Ինքնակառավարման մասին օրենքի 32-45 հոդվածների համաձայն, 2013 թվականի հունվարի 1-ից մինչև Դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում կատարել է հետևյալ աշխատանքները՝

Տալվորիկ համայնքի ավագանին հրավիրել է 4 հերթական և 7 արտահերթ նիստեր: Արձավիրի մարզի Տալվորիկ համայնքի բնակիչների կողմից ստացվել է 35 դիմում, որոնց ժամանակին տրվել է համապատասխան պատասխաններ:

Առ 09.01.2014 թ-ի դրությամբ համայնքում մշակվել է 546.5 հա հողատարածք, որը ըստ կուլտուրաների կազմում է՝

| | |
|------------------------------------|----------------------|
| 1. ցորեն – 47.5 հա 1 հա-ից | հավաքվել է 30 g բերք |
| 2. վարունգ - 3.3 հա 1 հա-ից | հավաքվել է 250 g |
| 3. լոլիկ -- 2.6 հա 1 հա-ից | հավաքվել է 300 g |
| 4. գ. Ցոխ -- 15.1 հա 1 հա -ից | հավաքվել է 300 g |
| 5. այլ բանջարեղեն –0.5 հա-ից | հավաքվել է 300g |
| 6. բոստան պարեն. – 55.5 հա 1 հա-ից | հավաքվել է 400 g |
| 7. պտուղ – 306.1 հա 1 հա-ից | հավաքվել է 71.6 g |
| 8. խաղող – 299.2 հա 1 հա-ից | հավաքվել է 70 g |
| 9. առվույտ – 188 հա 1 հա-ից | հավաքվել է 165 g |
| 10. արևածաղիկ –177.1 հա 1 հա-ից | հավաքվել է 20 g |
| 11. եգիպտացորեն – 29.3 հա 1 հա-ից | հավաքվել է 50 g |
| 12. Լոբի - 1.0 հա 1 հա-ից | հավաքվել է 30 g |
| 13. Չաման -- 7.0 հա 1 հա-ից | հավաքվել է 5 g |

Տալվորիկ գյուղական համայնքում առ 09.01.2014թ հողի հարկի գծով ֆինանսական մուտքերը կազմել են 11250.0 հազ. դրամ, որը կազմում է տարեկան պլանավորված եկամուտի 99.5%-ը, :

Գույքահարկի գծով ֆինանսական մուտքերը կազմել է 351.2 հազ. դրամ, որը

կազմում է տարեկան պլանավորված եկամուտի 70.0%-ը:

Հողի վարձի գծով ֆինանսական մուտքերը կազմել է 206.7 հազ. դրամ, որը կազմում է տարեկան պլանավորված եկամուտի 67.0 %-ը:

Գույքի վարձակալության եկամուտների գծով ֆինանսական մուտքերը կազմել է 250.0 հազ. դրամ, որը կազմում է տարեկան պլանավորված եկամուտի 30.0 %-ը:

ԵՎ այսպիսով առ 09.01.2014 թ-ի դրությամբ ընդամենը մուտքագրվել է 14175.2 հազար դրամ հողի հարկ, զորը կազմում է տարեկան պլանավորված եկամուտի 90.5 %-ը:

Ընդամենը Տալվորիկ համայնքում տարեկան պլանավորված եկամուտները եղել են 15224.0 հազար դրամ, իսկ փաստացի մուտքագրված եկամուտները եղել են 14175.2 հազար դրամ, որը կազմում է տարեկան պլանավորված եկամուտի 90.5 %-ը:

Առ 09.01.2014 թ-ի դրությամբ ընթացիկ տարվա աշխատավարձերի պարտքեր չունենք:

եկամտային հարկի գծով պարտքեր չունենք, , գյուղապետարանը էլեկտրաէներգիայի պարտք չունի:

Տալվորիկ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի ընդ մի աշխատակից չի ենթարկվել կարգապահական տույժի:

Տալվորիկ համայնքի ավագանին մշտական կապի մեջ է համայնքի գյուղապետարանի աշխատակազմի հետ:

Համայնքն ամենօրյա կապ է հաստատում մարզպետարանի, մարզային կառույցների, ՆԳ, դատական ու դատախազական մարմինների կառույցների հետ:

Տալվորիկ գյուղական համայնքի ղեկավարի ժ/պ **Բ. Թամոյան**

